ԺԹ.00.04 - «ԿԼԻՆԻԿԱԿԱՆ, ՀԱՏՈՒԿ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱՄԱՍ (75 ՀԱՐՑ)

1. Հոգեբանության գիտության զարգացումը, հիմնական փուլերը և ժամանակակից ուղղությունները:
2. Հոգեկանի զարգացումը ֆիլոգենեզում և օնտոգենեզում:
3. Գիտակցության էությունը, ֆունկցիաները, բովանդակային կառուցվածքը:
4. Զգայությունները որպես իմացության առաջին փուլը. հիմքը, տեսակները, որակները, հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները:
5. Ընկալման գործընթացը, տեսակները, հատկությունները:
6. Ապերցեպցիայի և դիրքորոշման դերը ընկալման մեջ:
7. Ուշադրության ֆիզիոլոգիական մեխանիզմները, գործառույթները, տեսակները:
8. Հիշողության մեխանիզմները և տեսակները:
9. Մտածողության մեկնաբանումը հոգեբանական դպրոցներում (տեսությունները):
10. Մտածողության տեսակները:
11. Մտածողության և խոսքի գենետիկական արմատները: Էգոցենտրիկ խոսքի բնույթը. համեմատական վերլուծություն (Լ. Վիգոտսկի, Ժ. Պիաժե):
12. Խոսքի տեսակները: Ներքին խոսքի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները:
13. Երևակայության տեսակները և հնարները: Երևակայության զարգացման հիմնախնդիրը:
14. Խառնվածքը որպես անհատական առանձնահատկություն
15. Խառնվածքի ուսումնասիրման հիմնական ուղղությունները /հումորալ, գործոնային, կոնստիտուցիոնալ, հոգեֆիզիոլոգիական/:
16. Բնավորության կառուցվածքի բաղկացուցիչները: Բնավորության գծեր:
17. Լեոնգարդի տեսությունը բնավորության շեշտավորվածության վերաբերյալ: Շեշտվածության տիպաբանու¬թյուն:
18. Ընդունակությունները որպես անհատական առանձնահատկություն: Տեսակները և զարգացման մակարդակները /օժտվածություն, տաղանդ, հանճար/:
19. Հույզերի և հուզական վիճակների տեսակները, դասակարգումը, հույզերի դրսևորման հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները:
20. Սթրեսի բնութագիրը, գործառույթները և մեխանիզմները:
21. Որոշման ընդունում. կամային ճիգեր և դրդապատճառների պայքար:
22. Կամային գործունեություն, կամային ակտի փուլեր:
23. 'Անձ' հասկացության մեկնաբանությունները հոգեբանական տեսություններում:
24. Հոգեբանական խորհրդատվության խնդիրները, սկզբունքները, փուլերը:
25. Անձի կառուցվածքի ուսումնասիրման հիմնական ստրատեգիաները:
26. Անհատ, անձ, անհատականություն հասկացությունների փոխհարաբերակցությունը:
27. Անձի դրդապատճառային-պահանջմունքային ոլորտ. դրդապատճառների տեսակները:
28. Անձի ձևավորման գործոնները գործունեության տեսության մեջ (ըստ Ա. Լեոնտևի):
29. Անձի զարգացման հիմնախնդիրը Լ. Վիգոտսկու պատմամշակութային տեսության մեջ:

30. Անձի տեսություն. գործառույթները, հիմնական ուղղությունները և հիմնախնդիրները, գնահատման չափանիշները:
31. Բիհևիորիզմի դրույթները և սոցիալական ուսուցման տեսությունը (Բ. Սկիներ, Ա. Բանդուրա):
32. Հոգեվերլուծության հիմնական դրույթները և հոգեկան ապարատի մոդելները (Զ. Ֆրոյդ):
33. Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների գործառույթները և տեսակները (Զ. Ֆրոյդ):
34. Հոգեվերլուծության զարգացումը. նեոֆրեյդիզմի ուղղությունները և դրույթները /Հորնի, Ֆրոմ, Ա. Ֆրոյդ, Է. Էրիքսոն և այլք/:
35. Անձի զարգացման էպիգենետիկ հայեցակարգը. նույնականության հիմնախնդիրը /Էրիքսոն/:
36. Ա. Ադլերի անհատական հոգեբանության հիմնադրույթները:
37. Ինքնաիրականացման տեսության հիմնադրույթները: «Մետամոտիվացիա» հասկացությունը: (Ա. Մասլոու)
38. Կ. Ռոջերսի տեսության հիմնադրույթները:
39. Կ. Յունգի վերլուծական հոգեբանության հիմնադրույթները:
40. Հոգեֆիզիոլոգիայի ուսումնասիրման առարկան և խնդիրները:
41. Հոգեբանության հետազոտական ծրագրերը. առավելությունների և թերությունների համեմատականը:
42. Հոգեբանական հետազոտությանը ներկայացվող պահանջները և չափանիշները:
43. Գիտափորձի կազմակերպման առանձնահատկությունները հոգեբանության մեջ: Փոփոխականների տեսակները:
44. Հոգեբանական հետազոտության օբյեկտիվության չափանիշները:
45. Փորձարարական հետազոտության կառուցվածքը և փուլերը:
46. Հոգեմետրիկ հիմքերը գիտափորձում և հոգեդիագնոստիկայում:
47. Հոգեբանական թեստերի դասակարգումը և դրանց ներկայացվող պահանջները:
48. Կոնֆլիկտի տեսությունները, դասակարգումը և դինամիկան:
49. Իրավաբանական հոգեբանության առարկան, խնդիրները և բաժինները:
50. Տարիքային և մանկավարժական հոգեբանության մեթոդները:
51. ‘Տարիք’ հասկացությունը և տարիքային պարբերացման հիմնախնդիրը, չափանիշները:
52. Վաղ մանկության տարիքի առանձնահատկությունները:
53. Նախադպրոցական տարիքի հոգեբանական բնութագիրը:
54. Դեռահասի հոգեբանական առանձնահատկությունները:
55. Ինքնագիտակցության զարգացումը դեռահասության և պատանեկության տարիքում:
56. Դեռահասների անձի շեշտվածության ուսումնասիրությունը և տիպաբանությունը /Լիչկո/:
57. Հոգեկան զարգացման հիմնախնդիրները հասունության շրջանում:
58. Տարիքային ճգնաժամերը որպես անձի զարգացման գործոն:
59. Դեվիանտ վարքի հոգեբանություն:
60. Հետազոտական մեթոդները սոցիալական հոգեբանության մեջ:
61. Սոցիալական խմբեր. ձևավորման գործոնները, տեսակները:
62. Անձի սոցիալականացման գործոնները և փուլերը:
63. Շփումը որպես եռակողմ գործընթաց /կոմունիկատիվ, ինտերակտիվ, պերցեպտիվ/:
64. Սոցիալ-հոգեբանական վերագրման /ատրիբուցիայի/ տեսությունը /Կելլի/:
65. Ձանգվածային հոգեբանության տեսությունները /Լեբոն, Տարդ/:
66. Ընտանիքի կառուցվածքն ու ֆունկցիաները:
67. Ընտանիքի կենսական ցիկլի փուլերը:

68. Ընտանիքի թերապիայի ժամանակակից մոտեցումները:
69. Արտակարգ իրավիճակների հոգեբանության առարկան, խնդիրները:
70. Իմիջի տեսակները:
71. Ինքնակարգավորման մեթոդները:
72. Հոգեբանական ներազդման տեսակները:
73. Միջանձնային ընկալման էֆեկտները որպես սոցիալական ճանաչման միջոց:
74. Սոցիալական դերերի տեսությունը:
75. Հոգեբանի մասնագիտական գործունեության էթիկական սկզբունքները:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱՄԱՍ (75 ՀԱՐՑ)

1. Հոգեկան առողջության չափանիշները:
2. Անձնային խանգարումների հոգեբանական բնութագիրը:
3. Ֆիզիոլոգիական աֆեկտի փուլերը:
4. Դեպրեսիայի հոգեբանական բնութագիրը, ախտանիշները և տեսակները:
5. Գեշտալտ հոգեբանություն և հոգեթերապիա
6. Տրանսակցիոն վերլուծություն: Տրանսակցիաների տեսակները
7. Զ. Ֆրոյդի հոգեվերլուծության տեսությունը
8. Ս. Գրոֆի տեսությունը: Ենթագիտակցականի կառուցվածքը
9. Հոգեչափման և ախտորոշման մեթոդները
10. Անհատականացումը ըստ Կ. Յունգի
11. Հոգեբանության մեթոդաբանությունը և տեսական հիմքերը
12. Տրանսպերսոնալ հոգեբանության էությունը (Յունգ, Ասաջիոլի, Գրոֆ)
13. Դերային խաղեր և պսիխոդրամա
14. Հետվնասվածքային սթրեսային խանգարումները: Տիպերն ու ախտանշանները: Վնասվածքի հաղթահարման ռազմավարությունը
15. Վիզուալիզացիոն տեխնիկաներ
16. Հասկացություն հոգեսոմատիկայի մասին
17. Անձի ախտաբանության բնութագիրը և ընթացքը
18. Սեռական պերվերզիաներ և սննդային խանգարումներ
19. Սևեռուն վիչակների խանգարումներ (կպչուն մտքեր և գործողություններ)
20. Կոնվերսիոն խանգարումով հիվանդի հոգեբանական բնութագիրը
21. Շիզոֆրենիայի սիմպտոմատիկան և տեսակները: Հիվանդի հոգեբանական առանձնահատկությունները
22. Գիտակցության խանգարումներ
23. Զգայական սինթեզի խանգարումներ
24. Հուզակամային ոլորտի խանգարումներ
25. Հոգեկան գործընթացների խանգարումներ